

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային տոնի առթիվ

Միրելի կանայք,

Միրով շնորհավորում եմ ձեզ գարնանային այս հիասքանչ տոնի կապակցությամբ: Մարտի 8-ը եւս մեկ հրաշալի առիթ է մեր երախտագիտության ու սիրո, ակնածանքի եւ գնահատանքի խոսքերն ուղղելու ձեզ՝ ձեր նվիրումի եւ հոգատարության, անսպառ բարության ու համբերության, ձեր ոգեշնչող ներկայության համար:

Դարեր ի վեր հայ կանայք եղել են հայոց օջախները շեն պահողն ու պահպանողը:

Մեր ժողովրդի ու նրա ստեղծած արժեքների հարատևության, ձեռքբերումների ու ազգապահպանման գործում անգնահատելի է ձեր դերակատարությունը: Առանձնահատուկ շնորհավորում եմ բոլոր մայրերին, որ ընտանիքի հենասյունն են, կրողն ու փոխանցողը մեր դարավոր ավանդույթների եւ համամարդկային արժեքների: Ցանկանում եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը կյանքում ունենա ամուր հենարան՝ սիրող ամուսին ու երջանիկ զավակներ:

Կրկին շնորհավորելով գարնան այս գեղեցիկ տոնի առթիվ՝ մաղթում եմ ձեզ, որ տոնը սկիզբ առնող գարնան հետ ուրախություն բերի, եղեք գեղեցիկ ու հմայիչ:

Թող սերը, ջերմությունն ու երջանկությունը միշտ լինեն ձեր ուղեկիցը՝ հանուն արժանավոր զավակների դաստիարակության, ընտանիքի գորացման ու պետականության վաղվա օրվան:

Հարգանքներով՝

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան